

ծանօթ չէ Օրմանեանին, եւ ոչ ալ յարակից մանրամասնութիւնները, օրինակ՝ երեք հարիւր կաթոլիկ հայերու կազմն ու կուրը, որուն պատճառաւ Յիուսեանց դուլէճը Կարինի մէջ կը գոցուի եւ քարոզիչները կը վտարուին Պարսկաստան կամ Կ. Պոլիս: Մոթըրէյ այս դէպքերուն պատահման ժամանակը 1702 Մարտ կը նշանակէ, որով՝ Աւետիքի պատրիարքանալէն վերջ:

Վտարումի հրամանը արքունի ըլլալով՝ կրկին կը հրամայուի Անատոլուի Պէյլէրպէյ Ղալայքի Ահմէտ փաշային, որ Տրապիզոն կը գտնուէր, հետապնդել այս հրամանին դործադրութիւնը: Ահմէտ փաշա, չէրքէզ ծագմամբ, որդին էր կըլայեկոզի մը եւ անոր համար կը մականուանուէր Ղալայքի:

Հայ-կաթոլիկ յարաբերութեանց մասին ըսենք, որ հակակաթոլիկ շարժումը միայն ոչ-կաթոլիկ հայերու մղումով չէր, որ կը շարժէր, այլ կային ուրիշ տարրեր ալ, զոր ղժբախտաբար, մեր գրողները նկատի չեն առներ եւ կը պարփակեն միայն հայկական շրջանի մէջ: Ժամանակուան դենպետը՝ Փէյզուլահ բուն հակակաթոլիկ էր, ըստ երեւոյթին, քաղաքական պատճառներով. ան կը ցանկար, որ Օսմանեան Կայսրութիւնը

նը զերծ մնայ արտաքին միջամտութենէ իր հպատակներուն առնչութեամբ: Եւ որովհետեւ կաթոլիկներու բնական պաշտպան կ'ըլլային եւրոպական քրիստոնեայ վեհապետները, ատով կերպով մը Օսմանեան վեհապետութիւնը իր երկրին մէջ իսկ կը բռնաբարուէր, որ, բնականաբար, թշնամութեան պիտի արժանանար երկրին վարիչ տարրէն:

Յետոյ կային նաեւ բնիկ Մարսէյցի Փրանսացի կրօնաւորին պէս մոլեռանդ կամ բախտախնդիր կրօնաւորներ, որոնք մահմետականութիւն ընդունելով՝ կաթոլիկ կղերին դէմ կը զառնային վայրագ կատաղութեամբ մը: 1702-ի Մարտին վերոյիշեալ Մարսէյցի Փրանսացի կրօնաւորը կը ներկայանայ Վէզիրին լատիներէն ճառով մը, որուն մէջ կ'ըսէ.

«Հուովմէական Կաթոլիկ կրօնքը սըտութենէ ծագած է» եւ ղժոխային ծրագիր մը ունի, հուսկ կը բացաղանչէ «ոտնակոխ ընենք զայն», եւ ոտնակոխ կ'ընէ՝ մասնատուի մը իր գրպանէն հանելով, եւ այսպէս կը մահմետականանայ:

Այն ատենները հինգ ուրիշ Փրանսացի ձիււորներ, որոնցմէ երեքը հրամանատարներ եւ երկու ծովայիններ էին, Սուլթան Պայազիտի մզկիթին առջեւ կը մահմետականանան: